ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
МИНИСТЕРСТВО ЗДРАВООХРАНЕНИЯ РА
MINISTRY OF HEALTH OF THE REPUBLIC OF ARMENIA

Վ. Ա. ՖԱՆԱՐՋՅԱՆԻ անվան
ՈՒՌՈՒՑՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ
АОЗТ НАЦИОНАЛЬНЫЙ ЦЕНТР ОНКОЛОГИИ им. В. А. ФАНАРДЖЯНА
CJSC NATIONAL CENTER OF ONCOLOGY named after V. A. FANARJIAN

ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ, ՖԱՆԱՐՋՅԱՆ Փ.76
ЕРЕВАН, КАНАКЕР, ул. ФАНАРДЖЯНА, 76
76 FANARJIAN str., YEREVAN, KANAKER, ARMENIA

№ 483
«07» 05 2025

Հեռ. (+374 10) 20-94-02

«Անիմեդ» ՍՊԸ -ի տնօրեն
Վալերի Սարգսյանին

Ծանուցում

Հարգելի՛ պարոն Սարգսյան,

«Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի և «Անիմեդ» ՍՊԸ-ի միջև 20.12.2024թ. կնքվել է ՈՒԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/18-9 ծածկագրով բժշկական նշանակության ապրանքների մատակարարման պայմանագիր, որի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Մատակարարը ստանձնում է բժշկական նշանակության ապրանքների մատկարարման պարտավորությունը (այսուհետ՝ ապրանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի պահանջների և №-2 հավելվածով սահմանված ապրանքների մատկարարման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում: Համաձայն Պայմանագրի «Անիմեդ» ՍՊԸ-ին 08.04.2025 և 23.04.2025 թվականներին տրվել են ապրանքների մատակարարման պատվերներ, սակայն մասնակցի կողմից սահամանված ժամկետներում ապրանքների մատարակարում տեղի չի ունեցել:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Անիմեդ» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները, «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն լուծում է ՈՒԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/18-9 պայմանագիրը՝ պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017թ մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. պարբերության "*Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝ ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը...*"

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ առաջարկվում է պայմանագիրը միակողմանի լուծելու հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող 7 օրվա ընթացքում «Վ. Ա. Ֆանարջյանի անվան

ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ի 1570060023050100 հաշվեհամարին վճարել պայմանագրի որակավորման ապահովում՝ 333900 /երեք հարյուր երեսուներեք հազար ինը հարյուր/ ՀՀ դրամ և պայմանագրի կատարման ապահովում՝ 222600 /երկու հարյուր քսաներկու հազար վեց հարյուր/ ՀՀ դրամ:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ գրությամբ սահմանված ժամկետում ապահովումները չվճարելու դեպքում Պատվիրատուի կողմից կկայացվի պատճառաբանված որոշում, որը կուղարկվի լիազոր մարմին՝ «Անիմեդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու:

ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ՝ ԿԱՐԵՆ ԾԱՌՈՒԿՅԱՆ

Կատարող՝ Ա. Համբարձումյան
Գնումների համակարգող
Հեռ. /010/ 20 50 50 /102/